

## Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանի ուղերձը

Ջերմորեն ողջունում եմ «ԱՐԱԳԻԼ» բարեգործական հիմնադրամի կազմակերպիչներին և հովանավորներին: Հայաստանի Հանրապետության առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո գործող Հիմնադրամն աստվածահաճո առաքելություն է ստանձնել: Սա մեր ազգային անվտանգության ու երկրի ամրության ապահովմանը միտված նախաձեռնություն է, քանզի փոքրաթիվ ազգաբնակչություն ունեցող պետությունների համար ժողովրդագրական իրավիճակի բարելավումը միայն առողջապահական խնդիր չէ:

Վերարտադրողական առողջությունը, որ բնորոշում է ոչ միայն բնակչության որոշակի հատվածի առողջությունը, այլև մարդկանց բարեկեցությունը, ծնելիությունն ու բնական աճը, ողջ աշխարհում ընդունված է համարել մարդկության զարգացման ամենակարևոր ոլորտներից մեկը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ևս շարունակաբար ջանքեր է գործադրում վերարտադրողական առողջության ոլորտում բուժօգնության բարելավման, որակի ու մատչելիության բարձրացման ուղղությամբ: Ծնելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների շնորհիվ 2009 թ. կատարված ուսումնասիրությունների արդյունքներով 1998-ի համեմատությամբ Հայաստանում անպտղության ցուցանիշը կրճատվել է 2 անգամ: Ընդ որում, առաջնային անպտղությունը կազմում է 4 տոկոս: Սակայն ակնհայտ է, որ կարևորագույն այս ոլորտում դեռևս լուրջ խնդիրներ ու անելիքներ ունենք, իսկ նորանկախ մեր պետությունն առայժմ հնարավորություն չունի անհրաժեշտ թանկարժեք բուժումն ամբողջովին փոխհատուցելու: Անպտղության խնդրի հաղթահարման նպատակով այսօր ողջ աշխարհում օժանդակ տեխնոլոգիաներ և ժամանակակից դեղամիջոցներ են կիրառվում, որոնք բավական թանկ են և, ցավոք, հասանելի չեն մեր շատ ընտանիքների համար: Այստեղ է, որ անգնահատելի օժանդակություն է ցուցաբերում «ԱՐԱԳԻԼ» բարեգործական հիմնադրամը՝ բուժման ժամանակակից մեթոդը վերարտադրողական բժշկության ասոցիացիայի հետ հասանելի դարձնելով Հայաստանի և Արցախի անապահով ընտանիքների համար:

Պատահական չէ, որ կարևոր այս նախաձեռնության կողքին են աշխարհի առաջատար մի խումբ մասնագետներ:

Մարդիկ վաղուց արդեն վարժվել են, որ առաջին տիկինը միշտ օգնության ու կարեկցանքի կարիք ունեցողների, իսկ առավել հաճախ՝ ծանր հիվանդությունից ապաքինվելու խնդիր ունեցող փոքրիկների կողքին է: Մայրական հոգատարությամբ բոլորին ջերմացնող տիկին Ռիտան այս պարագայում իր բարձր հովանու ներքո ստեղծված «Արագիլ» բարեգործական հիմնադրամի օժանդակությամբ փոքրիկ ունենալու երազանքն իրականություն դարձնողի առաքելություն է ստանձնել:

Ուզում եմ իմ խորին երախտիքը հայտնել բոլոր նրանց, ովքեր ընդգրկված են բարձր ու նվիրական նպատակներ հետապնդող այս ծրագրում, ովքեր այս կամ այն կերպ աջակցում են, որ իրականանա այն հայ ընտանիքների երազանքը, որտեղ պակասում է մանկական երանելի ճիչը:

Վստահ եմ, որ հիմնադրամին կհաջողվի գեղեցիկ այս գաղափարի շուրջ բազմաթիվ մեկենասներ համախմբել:

Հարգանքով՝

ՀՀ առողջապահության նախարար,  
պրոֆեսոր Դերենիկ Դումանյան

